

ՀՀ Վայոց ձորի մարզպետը Ծաղկաձորում հանդիպել է „Բազե-2013,, համահայկական երիտասարդական հավաքի մարզային թիմի անդամներին

20.08.2013



ՀՀ Վայոց ձորի մարզպետ Էդգար Ղազարյանը օգոստոսի 16-ին այցելել է Ծաղկաձորում օգոստոսի 12-ին մեկնարկած „Բազե-2013,, համահայկական երիտասարդական հավաք և հանդիպել Վայոց ձորի մարզային թիմի անդամներին: Մարզպետը ծանոթացել է թիմի առօրյային, զրուցել է նրանց հետ, հետաքրքրվել հավաքում նրանց ստացած տպավորություններով, ձեռք բերած հաջողություններով և հաստատած բարեկամական կապերով:

Հանդիպման ժամանակ թիմի անդամները ներկայացրել են մրցույթների արդյունքները, խոսել են թիմի առօրյայի մասին և իրենց հետաքրքրող հարցերն ուղղել մարզպետ Էդգար Ղազարյանին:

Մարզպետը հանդիպման ավարտին բարեմաղթանքներ է հղել թիմի անդամներին և հաջողություններ է մաղթել թիմին՝ հավաքի հաջորդ օրերի ընթացքում անցկացվելիք մրցույթներում:

Նույն օրը մարզպետ Էդգար Ղազարյանը որպես ՀՊՏՀ դասախոս և կառավարման ֆակուլտետի նախկին դեկան հանդիպում է ունեցել նաև ՀՊՏՀ-ի թիմի հետ:

Մարզպետի կողմից որպես նվեր բազեականների համար վայոցձորցիների կողմից ցուցադրվել է „Կրակների շուռ,, պարը: